ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՆՈՐ ՁԵՎ

Ազերինֆորմի «Էշելոնները գնացին Հայաստան» ինֆորմացիան, որը հրապարակվել է «Պրավդա» թերթի սեպտեմբերի 27-ի համարում, չի համապատասխանում իրականությանը: Այսպես, մեկ օրում Հայաստան է եկել ընդամենը 700 վագոն, մինչդեռ պետք է լիներ 1360: Հաղորդման մեջ նշվում է, որ «առաքվել է պարենով լի 58 վագոն», իրականում եկել է ընդամենը 3 վագոն, որոնցից երկուսում եղել է նեխած կարտոֆիլ, որի մասին նշվեց նաև կենտրոնական «Ժամանակ» հեռուստածրագրով, իսկ երրորդում՝ հոտած ձուկ: Բնական է, դրանք բեռնվել են շատ վաղուց և մնացել են փակուղիներում: Ձուկը, օրինակ, բեռնվել է դեռևս օգոստոսի 24-ին Կերչ քաղաքում: Այդ մասին հայտնեց Անդրերկաթուղու Երևանի բաժանմունքի պետ Հ. Ղանդիլյանը: Նա միաժամանակ նշեց, որ շրջափակումը շարունակվում է նոր ձևով: Ադրբեջանի տրանսպորտի աշխատողները հիմա դիմել են այլ տակտիկայի: Գնացքներից նրանք անջատում են պարենային ապրանքներով և նավթամթերքներով բեռնված վագոնները, իսկ դրանից հետո շարժակազմերը ուղարկում Հայաստան: Շրջափակման սկզբից մինչև այսօր Ադրբեջանի երկաթուղուց չի ստացվել վառելիքով բեռնված և ոչ մի վագոն: Դա ստեղծել է շատ լարված իրադրություն: Աղետի գոտում այսօր կանգնած է 700 վագոն՝ հիմնականում Վրաստանից, մասամբ Ադրբեջանից, բայց դրանք էլ անհնար է բեռնաթափել, քանի որ հարյուրավոր բեռնատարներ կանգնած են բենզին և դիզելային վառելիք չլինելու պատճառով:

Անցած մեկ օրում իրադրությունը չի փոխվել: Նորաշեն և Իջևան կայարանների մատույցներում կա 20 հազար վագոն: ԽՍՀՄ հաղորդակցության ճանապարհների մինիստրության և մյուս միութենական մարմինների կողմից ձեռնարկվող միջոցները դեռևս դրական արդյունք չեն տալիս:

(Արմենպրես)